

ԱՅԻՍՈՒ ԳԱՐԱՀԻՄԱՐԻ ՄԷԶ

18 Հոկտեմբեր 1913

Դրերու գիտին և տպագրութեան յորելեանը շատ շքեղ կատարուեցաւ Աֆիան Գորահիսարի մէջ եւս : Արդէն ուրբաթ օրուընէ բոլոր վարժուրանները փակուած էին . շաբաթ օր եկեղեցին ներքին կողմը ու բակը յաղթական կտմարներով ու ծանրագին ծածկացներով զարդարուած էր : Կանանց յատուկ պատարագէ վերջ բակը հոգեհանգիստ կատարուեցաւ : Այս առթիւ արտասանութիւններ և երգեր երգուեցան երկսեռ ուսանողներու կողմէ : վերջապէս Սահակեան վարժարանի մասնաճիւղին անօրէն նրուանդ էֆ . Գէորգեան ճառ մը արտասանուեց ներկայ հազարի մօտ ուսանողներուն թելազրելով , որ ճշմարիտ աշտկերտի անսունը արդարացնեն իրենց անխոնջ և պարկնշատ աշխատասիրութեամբ : Ժամը 8 (Ը. Թ.) ին նոյնպէս կանանց յատուկ հանդէս մը տեղի ունեցաւ վարժարանին ընդարձակ սրահին մէջ . ներկայացրուեցաւ տեղոյս երիտասարդներու օժանդակութեամբ «Դրերու զիւտը վերնագրով չորս արարուած թաթերգութիւնը , զոր պատարաստած էր յատկապէս նրուանդ էֆ . Գէորգեան Զանազան հաճելի ու սրապայոյց արտասանութիւններէ , խմբերգներէ ու մններգներէ վերջ կատարուեցաւ րիէսոք : Դերակառարները իսխստ յաջող կերպով ներկայացցուցին զիւտի անցքերն ու պարագան երը մանաւանդ Ա . Մէկրուպի երազը շատ ուշադրաւ ներկայացցուց Բարունակ էֆ . Կարապետեան , Ա . Մէկրուպի գերին մէջ :

Դրեմէ երեք ժամ տեւող այս հանդէսը առեւական ուրախութիւնն մը պատճառեց բոլոր ներկաներուն : Յօթը անձերէ բաղկացած յանձնախումբը ոչ մէկ բան չինայեց հանգէսին շքեղութեան համար : Բեմի զարդարանքը , դերակտարներուն զգեստները մտնամքով պատրաստուած էին . բանախօսեցին առաջնորդական տեղապահ Տ . Մամբրէ քահանայ , և անօրէն նրուանդ էֆ . Գէորգեան , և Բողոքական քարոզիչ պատուելի Յակոբ Երանեան :

Տեղոյս «Բնար» երգչախումբը դաշնակի , ջութակի և սրինգի ընկերակցութեամբ երգեց հայկական ընտիր երգեր , խիստ վարժ և զեղարուեստական հաշակով միշտ յուղի : Իրապէս չորհաւորելի է չինար» երգչախումբի այս յաջողութիւնը յետամետց քաղաքի մը մէջ և միշտ արժանի քաջալերութեան :

ՀԱՆԴԻՍԱՑԵՍ